

Առևտրային գործունեություն իրականացնելիս մշտապես հնարավոր են չնախատեսված, անորոշ իրավիճակներ, որոնք կարող են բերել բացասական հետեանքների: Դրանցից խուսափելու կամ դրանց ազդեցությունը մեղմելու համար անհրաժեշտ է ժամանակին ձեռնարկել կանխարգելիչ միջոցներ, հաշվի առնել եւ գնահատել զարգացման վրա ազդող հնարավոր պատահական գործոնները, նախօրոք հնարավորինս խուսափել ռիսկային իրադրություններից: Ռիսկը մարդու կենսագործունեության անբաժան ուղեկիցն է: Այն նախանշված է ճակատագրով, որից խուսափել հնարավոր չէ: Մինչդեռ առևտրային ռիսկին տնտեսավարող սուբյեկտը դիմում է սեփական կամքով՝ ակնկալելով ցանկալի արդյունք: Ընդ որում՝ ռիսկը, սուբյեկտիվ լինելով հանդերձ, երբեմն օբյեկտիվ բնույթի է՝ գործում է անկախ դրա գոյության ընդունումից:

Ռիսկ հասկացությունն ունի իսպանա-պորտուգալական ծագում եւ նշանակում է ստորջրյա ժայռ, որը հունարենում՝ *risco*, իտալերենում՝ *risco*, վտանգի նշանակություն ունի, ֆրանսերենում՝ *risque*, ռիսկի դիմելու իմաստ է ստացել: Ռիսկ հասկացությունը քննարկում են հասարակական ու բնական բազմաթիվ գիտություններ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր նպատակը եւ հետազոտման համապատասխան մեթոդները: Այսպես, ռիսկը քննարկում են հոգեբանությունը, տնտեսագիտությունը, իրավագիտությունը, կենսաբանությունը եւ այլ գիտություններ:

Տնտեսագիտական գրականության մեջ ռիսկի միանշանակ սահմանման բացակայությունը պայմանավորված է ռիսկը բնորոշող տարրերի բազմազանությամբ: Բացի այդ, ռիսկը բարդ հասկացություն է՝ հիմնված անհամապատասխան, հաճախ իրարամերձ բազմաթիվ դրույթների վրա: Այսպես՝ առևտրային գործունեության խնդիրներն ուսումնասիրող տնտեսագետներ Ֆ.Գ. Պանկրատովը եւ Թ.Կ. Սերյոզինան շեշտում են, որ ռիսկը առևտրային գործունեությամբ զբաղվելու հետեանքով հնարավոր վնասի, կորստի առաջացում է: Վերստելի բառարանում ռիսկը սահմանվում է որպես վտանգ, վնաս, կորուստ կրելու հավանականություն: Օժտգովի բառարանում ռիսկը սահմանվում է որպես վտանգի հնարավորություն կամ որպես հաջողությանը միտված գործողություն, որը բարենպաստ ավարտ կունենա: Այլ կերպ ասած՝ ռիսկը մարդկային գործունեություն է՝ հաջողության հասնելու ակնկալիքով: Այն միջոցառումների ամբողջություն է, որն ուղղված է ընդունված որոշումների կենսագործմանը՝ հաշվի առնելով ցանկալի արդյունքին հասնելու հավանականությունը:

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս ձեռնարկատերերը անպայման հանդիպում են մեծ կամ փոքր ռիսկերի: Ընդ որում՝ շուկայական հարաբերությունների պայմաններում գործարարները կարող են իրենց գործունեությունը հաջողությամբ իրականացնել միայն այն դեպքում, երբ կատարում են ռիսկային գործողություններ: Նշենք նաեւ, որ ձեռնարկատիրական ռիսկը, որի տարատեսակներից մեկը առևտրային ռիսկն է, երկրի հասարակական, տնտեսական զարգացման շարժիչ ուժն է, առանց որի հնարավոր չէ կյանքի կոչել նախաձեռնությունը, ձեռներեցությունն ու նորարարությունը:

Ռիսկի բնութագրությունը կարելի է շարունակել, սակայն կանգ առնելով դրա բնորոշ հատկանիշների վրա՝ կարող ենք առանձնացնել հետեւյալները.

- ✓ անորոշությունը,
- ✓ վտանգի առկայությունը,
- ✓ հանդգնությունը,
- ✓ խիզախումը:

Ռիսկի տարբեր սահմանումների վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել ռիսկային իրավիճակին բնորոշ հիմնական պահերը: Դրանք են.

- ✓ իրադարձության պատահական բնույթը,
- ✓ այլընտրանքային որոշումների առկայությունը,
- ✓ հետեանքների հայտնի կամ որոշվող հավանականությունները եւ սպասվող արդյունքները,
- ✓ վնասների առաջացման հավանականությունը,
- ✓ լրացուցիչ շահույթի ստացման հավանականությունը:

«Ռիսկ» հասկացության հետ սերտ կապված է «վնաս» հասկացությունը: Եթե ռիսկը դիտարկենք որպես ապագայում սպասվող հնարավոր բնական շեղում, ապա վնասը կամ կորուստը համարվում են իրական, փաստացի շեղում: Վնասի հետեանքների վերացումը նշանակում է կանխատեսված ռիսկի իրականացում: Ուստի անհրաժեշտություն է առաջանում հաշվարկել, ընդհանրացնել, ապա նաեւ վերլուծել տարբեր բնույթի անբարենպաստ երեւույթների վերաբերյալ տեղեկատվությունը, պարզել դրանց ծագման եւ զարգացման միտումներն ու օրինաչափություններն այնպես, որ կանխատեսման հնարավորություն ստեղծվի:

Առևտրային գործունեության ելքը պայմանավորված է ռիսկի աստիճանին վերաբերող որոշումներով, որոնք լինում են.

- ✓ նվազագույն ռիսկով,
- ✓ ռիսկի միջին աստիճանով,
- ✓ ռիսկի բարձր աստիճանով,
- ✓ առավելագույն ռիսկով:

Նվազագույն ռիսկով գործունեություն իրականացնող կազմակերպությունը նպատակ ունի ոչ թե շատ շահույթ ստանալ, այլ հնարավոր կորուստներից խուսափել: Սակայն նվազագույն ռիսկով ֆիրմայի գործեակերպը բացասաբար կանդրադառնա դրա զարգացման տեմպերի եւ մրցունակության վրա:

Միջին ռիսկ պարունակող որոշումներով գործող կազմակերպությունը ձգտում է ստանալ ճյուղային միջին շահույթ՝ հաշվի առնելով նախկինում ձեռք բերված ապրանքները եւ գործունեության շրջանակների հնարավոր ընդլայնումը:

Բարձր ռիսկով որոշումներ կարող են կայացնել զգալի կապիտալ ունեցող ֆիրմաները՝ նպատակ ունենալով գերակշիռ դիրք գրավել շուկայում:

Առավելագույն ռիսկով որոշումներն առավելապես հասցնում են բացասական հետեանքի, որովհետեւ այդ որոշումներն ընդունվում են ոչ թե իրականության ուսումնասիրմամբ ու հաշվառմամբ, այլ հիմնականում առանձին սուբյեկտիվ, կամային ցանկությունների հիման վրա: Սակայն չպետք է եզրակացնել, որ գործնականում անհրաժեշտ է ամիսատարակ հրաժարվել առավելագույն ռիսկ պարունակող որոշումներ ընդունելուց: Ազատ շուկայական հարաբերությունների պայ-

«ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՌԻՍԿ» ՀԱՐՑԻ ՇՈՒՐԳ

ՀՏԴ 658 : 330


Ատենախոսության թեմա՝
**Առևտրական ռիսկի կանխատեսման եւ
նվազեցման հիմնախնդիրները**
(ՀՀ մանրածախ
կազմակերպությունների օրինակով)

Գիտական ղեկավար՝
Գագիկ ՉՍԻՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

**Աննա
ՀԱՅՐՈՒՆԻ**
ՀՊՏՀ
կոմերցիայի
ամբիոնի
ասպիրանտ



Առևտրային կազմակերպության շահույթի կախվածությունը ռիսկի մեծությունից



Ռիսկի աստիճանի եւ շահույթի կապը

Ռիսկի աստիճանը	Շահույթը տոկոսներով	
	Ապրանքաշրջանառության նկատմամբ	Իրացման ծախսերի նկատմամբ
Թույլատրելի	1 - 4	1 - 9
Միջին	5 - 10	10 - 20
Բարձր	11 և ավելի	21 և ավելի

մաններում տնտեսավարող սուբյեկտների միջև մրցակցային պայքարը եւ դրանց նպատակային խնդիրների իրականացման պահանջը անհրաժեշտաբար ենթադրում է ռիսկային գործունեություն: Անկախ համապատասխան որոշումների բնույթից՝ ռիսկը համարվում է արդարացված, եթե հիմնավորված է, այսինքն՝ հաշվի են առնված տնտեսական երեւույթի վրա ազդող հնարավոր գործոնները:

Այնուամենայնիվ՝ տնտեսավարող սուբյեկտը պետք է կարողանա նախանշել նաեւ իր գործունեության սահմանները, լինել հաշվեկատար, չանցնել այն սահմանները, որից այն կողմ հնարավոր են մեծ կորուստներ, անգամ սնանկացման վտանգ:

Այսպիսով, առևտրային գործունեության ոլորտում ռիսկն անխուսափելի է, քանի որ գործունեության սկզբում ենթադրվում է սպասվելիք շահույթի հավանական մեծությունը, իսկ արդյունքում հնարավոր են կանխատեսված մեծությունից ինչպես դրական, այնպես էլ բացասական շեղումներ: Նկատելիք, որ կազմակերպության գործունեությունից ակնկալվող շահույթի մեծությունը մեծապես կախված է ռիսկի մակարդակից: Ընդ որում՝ որքան մեծ է շահույթ ստանալու ձգտումը, այնքան այլ հավասար պայմաններում մեծ է ռիսկի աստիճանը, եւ հակառակը: Գրաֆիկորեն այդ կախվածությունն ունի գծապատկերում ներկայացված տեսքը:

Գծապատկերում ռիսկն ու շահույթը փոխկապված են եւ փոխապայմանավորում են ինչպես տնտեսական կորագծի արագին ու օրդինատը: Ավելի մեծ ռիսկը պայմանավորված է ավելի մեծ շահույթ ստանալու հավանականությամբ: Ընդ որում՝ գոյական ռիսկն ապահովում է ամենացածր շահույթը (0:Շ₁), իսկ առավելագույն ռիսկի դեպքում (Ռ₂) շահույթն ունի ամենաբարձր նշանակությունը:

$$C = C_3 (C_3 > C_2 > C_1):$$

Առևտրային ռիսկի եւ շահույթի միջև գոյություն ունեցող կախվածությունը թույլ է տալիս ռիսկը գնահատել որոշակի չափորոշիչներով:

Աղյուսակում բերված տվյալներից երեւում է, որ որքան մեծ է շահույթի մակարդակն ըստ ապրանքաշրջանառության եւ իրացման ծախսերի, այնքան այլ հավասար պայմաններում մեծ է նաեւ ռիսկի աստիճանը: Այսպիսով՝ ռիսկը գործողություն է, որը կարող է հանգեցնել անհաջողության, սակայն կա նաեւ երջանիկ ելքի հավատար: Ռիսկային գործունեությունը կհանգեցնի հաջողության, եթե հաշվի առնվեն գործունեության վրա ազդող բոլոր գործոնները, կամ ժամանակին ձեռնարկվեն ռիսկի նվազեցմանը նպաստող միջոցառումներ: Իհարկե՝ հնարավոր չէ նախօրոք կանխատեսել գործունեության ընթացքի բոլոր մանրամասները, քանի որ համապատասխան որոշումներն ընդունվում են ապագայի վերաբերյալ տվյալների անբավարարության, հետեւաբար՝ անորոշության

պայմաններում: Այդ անորոշությունն էլ ռիսկի առաջացման պատճառն է: Ընդ որում՝ որոշումներն ընդունելիս որքան շատ է անորոշությունը, այնքան մեծ կլինի ռիսկի աստիճանը: Առևտրային ռիսկի առաջացման պատճառները հիմնականում կապված են ապրանքների իրացման եւ ծառայությունների մատուցման հետ: Այսպես՝ առևտրային ռիսկի առաջացման հիմնական պատճառներն են.

- ապրանքների եւ ծառայությունների առաջարկի ու պահանջարկի ցանկացած փոփոխություն,
 - ապրանքների գնման գնի բարձրացումը, որն իր հերթին բերում է մանրածախ գների բարձրացման, հետեւաբար՝ մեծանում է նաեւ ապրանքների իրացման ռիսկը,
 - ապրանքաշրջանառության ծավալի փոքրացումը, որը բերում է իրացման ծախսերի մակարդակի բարձրացման՝ պայմանավորված հաստատուն ծախսերով, որն էլ ի վերջո բացասաբար է անդրադառնում շահույթի մեծության վրա,
 - բնակչության վճարունակության փոփոխությունը. եթե բնակչության դրամական եկամուտները աճում են ավելի դանդաղ, քան ապրանքների առաջարկը, ապա կառաջանան ապրանքների իրացման հետ կապված լուրջ խնդիրներ,
 - ապրանքաշարժի գործընթացում ոչ ճիշտ գործողությունների հետեւանքով ապրանքների որակական հատկանիշների կորուստ, որն անհրաժեշտություն է դարձնում գների իջեցումը,
 - ֆորս-մաժորային իրավիճակներ. սրանք այնպիսի պայմաններ են, որոնց առաջացման դեպքում անհնար է դառնում ապրանքների առաքումը գնորդ կազմակերպությանը, ինչն անշուշտ բացասական ազդեցություն կազմակերպության գործունեության արդյունավետության վրա:
- Հաշվի առնելով առաջացման պատճառները՝ առևտրային ռիսկը դասակարգվում է հետեւյալ տեսակների.
- ✓ շուկայում ապրանքների իրացման եւ ծառայությունների մատուցման,
 - ✓ ապրանքների փոխադրումների կազմակերպման,
 - ✓ շուկայում ապրանքների եւ ծառայությունների հասարակական ճանաչման,
 - ✓ բնակչության գնողունակության փոփոխության,
 - ✓ ֆիրմայի գործունեության ընթացքում ֆորս-մաժորային հանգամանքների կանխման կամ վերացման անհնարինության հետ կապված ռիսկեր:
- Այսպիսով՝ հետեւում է, որ ռիսկերի հնարավոր նվազեցումը կամ ավելացումը ուղղակի ազդեցություն ունի առևտրային կազմակերպության գործունեության արդյունքների վրա: Հաշվի առնելով ՀՀ-ում արդեն ձեւավորված առևտրային գործունեության առանձնահատկությունները՝ կարելի է նշել, որ ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի ներդրումը՝ ռիսկի եւ շահույթի առավելագույն ընդունելի (օպտիմալ) հարաբերակցության հասնելը, հնարավորություն կընձեռի, չխուսափելով բարձր ռիսկ պարունակող որոշումներից ստանալ սպասված շահույթ, ինչը շատ կարեւոր է անհրաժեշտ է առևտրային յուրաքանչյուր կազմակերպության համար:

1. Панкратов Ф.Г., Серегина Т. К., *Коммерческая деятельность*, Учебник, Маркетинг, М. 1998, с. 12.
 2. *Stu' Webster's M., Dictionary*, 1999.

Օգտագործված գրականություն

1. Բուլակիյան Ա.Յ., Չատինյան Գ.Ս. եւ ուրիշներ, *Ձեռնարկատիրական ռիսկ*, Եր., Տնտեսագետ, 2000, էջ 32-46
 2. Կոմերցիայի հիմունքներ, *Ուսումնական ձեռնարկ*, Ա.Յ. Բուլակիյանի խմբ., Երեւան, Տնտեսագետ, 2003, էջ 230-24
 3. Панкратов Ф.Г., Серегина Т. К., *Коммерческая деятельность*, Учебник, Маркетинг, М. 1998, с. 12.
 4. Бланк И.А., *Финансовый менеджмент*, Учебный курс, 2-е изд., перераб. и доп., К.: Эльга, Ника-Центр, 2005, с. 44-47.
 5. Сироткин В.Б., *Финансовый менеджмент фирмы*, Учеб. пособие, М.: Высш. шк., 2008, с. 28-33.
 6. *Webster's M., Dictionary*, 1999.